ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնը ներկայիս հաստիքակազմով ձևավորվել է 2011 թվականին:

2012 թվականից ամբիոնը ղեկավարում է ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ., դոցենտ Միսակ Մարկոսյանը (էլ. փոստ՝ misakmmm100@mail.ru):

Ամբիոնի դոցենտի պաշտոնը զբաղեցնում է ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ. Արմինե Մելիքսեթյանը:

Ամբիոնի ավագ դասախոսի պաշտոնը զբաղեցնում է ոստիկանության մայոր Հռիփսիմե Խաչատրյանը:

Ամբիոնի դասախոսի պաշտոնը զբաղեցնում է ոստիկանության ավագ լեյտենանտ Լուսինե Թասալյանը:

Ամբիոնի ուսումնական ասիստենտի պաշտոնը զբաղեցնում է ոստիկանության ավագ լեյտենանտ Աննա Ադամյանը:

Ամբիոնում համատեղման կարգով և պայմանագրային հիմունքներով դասավանդում են կրթահամալիրում և ոստիկանությունում ղեկավար պաշտոններ զբաղեցնող մասնագետներ, ինչպես նաև ՀՀ դատախազության, Ազգային անվտանգության ծառայության, Արդարադատության նախարարության, Փաստաբանական պալատի ներկայացուցիչներ:

Ամբիոնի գործունեության հիմնական ուղղություններն են կրթական, և ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, ամբիոնի գործունեության ուղղվածությանը համապատասխան գիտական հետազոտությունների իրականացումը, ամբիոնի ուղղվածության ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնագործնական ձեռնարկներ, ուղեցույցներ և գիտաուսումնական այլ անհրաժեշտ նյութեր մշակելը, ատենախոսությունների վերաբերյալ առաջատար կազմակերպության կամ պաշտոնական ընդդիմախոսի կարծիքների պատրաստումը, ամբիոնին կից գիտական խմբակի գործունեության կազմակերպումը, կրթահամալիրի կողմից իրականացվող կրթության որակի ապահովման քաղաքականության իրականացմանը նպաստելը:

2018-2019 ուսումնական տարում ամբիոնի դասախոսական անձնակազմը ղեկավարում է մագիստրատուրայի 22 սովորողների մագիստրոսական թեզերը:

2012-2018 թվականների ընթացքում ամբիոնի դասախոսական անձնակազմը հրատարակել է 10-ից ավելի ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնագործնական ձեռնարկներ, 60-ից ավելի գիտական հոդվածներ, ամբիոնի կողմից պատրաստվել են դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների վերաբերյալ առաջատար կազմակերպության և պաշտոնական ընդդիմախոսի 40-ից ավելի կարծիքներ:

2015-2016 և 2017-2018 ուսումնական տարիներին ամբիոնը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի կողմից ճանաչվել է գիտական գործունեության լավագույն արդյունքներն ապահովված ամբիոն: